ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ-ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Գրապահարան-զգեստապահարան, նախատեսված հագուստի, գրքերի և այլ պարագաների պահպանման համար։ Կառուցվածքը՝ համակցված պահարան՝ բաղկացած երկու հիմնական ուղղահայաց բաժանմունքներից և ստորին փակ պահոցից։ • Հագուստի բաժանմունք՝ առանձին բացվող դռնով, ներսում՝ հագուստի կախիչների տեղադրման համար նախատեսված մետաղական հորիզոնական ձողով։ • Գրապահարանի բաժանմունք՝ առանձին բացվող դռնով, ներսում՝ գրքերի և այլ պարագաների տեղադրման համար նախատեսված հորիզոնական դարակներով։ • Ստորին պահոց՝ երկու բացվող դռնով, նախատեսված գրքերի, հագուստի և այլ պարագաների պահպանման համար։ • Դարակների քանակը՝ 3 հատ ։ • Դռների քանակը՝ 2 հատ։ • Դռների բացման մեխանիզմը՝ ծխնիներով, բռնակներով, սահուն բացման և փակման հնարավորությամբ։ Չդնահուր չափերը՝ • Լայնությունը՝ 850–900 մմ (որից զգեստապահարանի հատվածը՝ 420-450 մմ, գրապահարանի հատվածը՝ 420-450 մմ), • Խորությունը՝ 550–600 մմ։ • Բարձրությունը՝ 1500–1600 մմ։ Նյութը՝ լամինացված փայտատաշեղային սալ (ԼՓՏՍ)՝ 18 մմ հաստությամբ։ Իրանը, կողապատերը, վերին և ստորին հորիզոնական հատվածները, դարակները և դռները՝ նույն նյութից։ Եզրերի մշակումը՝ սալերի բաց եզրերը՝ պաշտպանիչ եզրաժապավենով պատված, առանց սուր եզրերի, շերտազատումների և տեսանելի վնասվածքների։ Կցամասերը՝ մետաղական ծխնիներ, դռների բռնակներ, դարակների ամրակներ և հավաքման համար անհրաժեշտ այլ միացնող տարրեր։ Հագուստի կախիչների ձողը՝ մետաղական, հորիզոնական տեղադրմամբ, ամուր ամրացված պահարանի կառուցվածքին։ Կայունությունը՝ հատակին կայուն տեղադրման կառուցվածքով, անհրաժեշտության դեպքում՝ պատին ամրացնելու

	հնարավորությամբ: Արտաքին տեսքը՝ հարթ, միատեսակ մակերեսներով, առանց ճաքերի, քերծվածքների, շերտազատումների և այլ տեսանելի վնասվածքների: Գույնը՝ դարչնագույն կամ մոկկո կամ բեժ (երանգները և նախշերը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ) Ընդհանուր պահանջները՝ նոր, չօգտագործված, հավաքման և շահագործման համար անհրաժեշտ բոլոր կցամասերով և ամրակներով : Մատակարարման պայմանները՝ ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը, հավաքումը (եթե ապրանքը ունի հավաքման կարիք) և տեղադրումը համապատասխան սենյակում կամ պահեստում, ինչպես նաև կարգաբերումները իրականացվում է Վաճառողի ուժերով և իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 365օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Армен Рафаелян Румелович ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	